

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼԵՎՈՆ ՕՆԻԿԻ ԱԼՈՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

Մակարյան Ալբերտ Արշավիրի
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մուրադյան Սամվել Պարզկի
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Սողոյան Աստղիկ Վալերիանի
բանասիրական գիտությունների թեկնածու

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի
անվան գրականության
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. փետրվարի 11-ին՝
ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012 մասնա-
գիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Արուսյան 52^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլ-
տետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունվարի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



Ա. ՄԱԿԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Այսօր էլ՝ հայոց պատմության բեկումնային ժամանակաշրջաններից մեկում, երբ մեր հինավուրց երկիրը կանգնած է գոյաբանական վճռորոշ հանգուցակետերի առջև, անհրաժեշտություն է առաջանում նորովի գնահատելու և վերլուծելու նրա անցած ուղին պատմական փորձից արժևորելի դասեր քաղելու նպատակով: Արցախյան երկու պատերազմների հետևանքները ևս պարտադրում են խորազնին անդրադարձ կատարել Հայաստանի և հայ ժողովրդի պատմական ճակատագրին, նրա անսասանության համար մարտնչած քաջորդիների ու հերոսուհիների սխրանքներին, ինչպես նաև հակադրվող իրարամերժ դրսևորումներին, որոնց ժամանակին անդրադարձել է Ծերենցն իր «Թորոս Լևոնի», «Երկունք Թ. դարու» և «Թեոփորոս Ռշտունի» վեպերում:

Մեր օրերում Ծերենցի ստեղծագործությունը, չնայած կենսունակ տարերքի լայն ընդգրկմանը և մշտարդիական թեմաների դիտարկմանը, գրեթե դուրս է մնացել լրջախոհ ուսումնասիրությունների շրջանակներից: Այս հանգամանքը պայմանավորված է թե՛ նրա գրական ժառանգության նկատմամբ մասնագիտական հետաքրքրության անկումով, թե՛ ժամանակակից քննադատական մեթոդաբանությունների համատեքստում ստեղծագործությունների սահմանափակ ներգրավվածությամբ: Արդյունքում՝ Ծերենցի վեպերի գեղագիտական, գաղափարական և պատմագիտական նշանակությունը շարունակում է մնալ բավարար չափով չվերլուծված ու չարժևորված: Երևույթ, որն արդարացի չէ և ոչ մի առումով, մանավանդ՝ որ նրա ստեղծագործությանը նվիրված վերջին ուսումնասիրությունը՝ մենագրության տեսքով, լույս է տեսել 65 տարի առաջ:

Ծերենցը, դիմելով պատմական անցյալին և վերափմաստավորելով այն ներկայի ու ապագայի տեսակետից, հանդիսացել է պատմավեպի ժանրի հիմնադիրը: Նա իր երեք պատմավեպերի ստեղծման համար օգտվել է հայ պատմիչների աշխատություններից՝ պահպանելով ստեղծագործական ինքնուրույնություն և ինքնօրինակություն: Վիպասանն իր գաղափարները հաջողությամբ մարմնավորել է կոնկրետ մարդկային կերպարներում, կերտել է ոչ միայն հայրենասեր, դրական կերպարներ, այլև քննադատել է դավաճան և ազգադավ նախարարներին, հանգամանք, որը բնորոշ է բոլոր ժամանակներին:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Առենախոսության նպատակն է պատմության թեմայի հետազոտությունն արևմտահայ ռոմանտիկական արձակում, որի առանցքը հիմնականում կազմում է Ծերենցի պատմավիպասանության համակողմանի ուսումնասիրությունը: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- քննել արևմտահայ ռոմանտիկական պատմավեպի ժանրային առանձնահատկությունները և համապարփակ անդրադարձ կատարել ժանրի ստեղծմանը:

- ուշադրություն դարձնել ոչ միայն պատմական փաստի և դրանից բխած գեղարվեստական իրականության փոխհարաբերության հարցին, այլև ժանրի հիմնադիր Ծերենցի՝ պատմության և արդիականության նկատմամբ ունեցած վերաբերմունքին ու հայացքներին, նրա գեղարվեստական երևակայության առանձնահատկություններին, կենսական փաստը գեղարվեստականի փոխանցելու վարպետությանը:

- հայտնաբերել Ծերենցի վեպերի պատմագիտական սկզբնաղբյուրները և անդրադառնալ դրանց՝ տեսնելու համար, թե ինչ չափով են ազդել պատմավիպասանի գեղարվեստական մտածողության և ստեղծագործական նպատակաուղղվածության վրա:

- ուսումնասիրել և համեմատել Ծերենցի պատմավեպերը Րաֆֆու և Մուրացանի համանման երկերի հետ:

- նորովի ներկայացնել հայրենասիրության գաղափարակիր կանանց սխրանքները VII և IX դարերի ազատագրական ոգորումների ընթացքում: Միաժամանակ համապարփակ լուսաբանության արժանացնել կին-կերպարի ֆենոմենը:

- քննաբանել մինչև այժմ պատշաճ խորությամբ չուսումնասիրված «Թորոս Լևոնի», «Երկունք Թ. դարու» և «Թեոդորոս Ռշտունի» պատմավեպերի պատումի յուրահատկությունները, լեզուն, դրանց արտահայտման եղանակները, որոնք ստեղծում են գեղարվեստական լեզու և անհատական ոճ:

Աշխատանքի գիտական նորույթը: Դիտելի է, որ ատենախոսության թեման հայ գրականության ճիշտում համալիր ուսումնասիրության դեռևս չի ենթարկվել, թեև առանձին ուսումնասիրություններում և հոդվածներում կատարվել են համառոտ որոշ անդրադարձներ:

Ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել և տիպաբանական քննության ենթարկել Ծերենցի, Րաֆֆու և Մուրացանի պատմավեպերը, վեր հանել հայ վերնախավի՝ նախարարների, իշխանների և հոգևորականների դավաճանական վերաբերմունքը հայրենիքի և ժողովրդի հանդեպ: Նորովի է ներկայացվում նաև հայրենասեր կնոջ կերպարն ազատագրական պայքարի ընթացքում, իսկ կին-կերպարի ֆենոմենը ենթարկվում է համապարփակ լուսաբանության: Պատշաճ խորությամբ ուսումնասիրվում է նաև Ծերենցի պատմավեպերի լեզուն, դրանց առանձնահատկություններն ու լեզվաոճական արտահայտչամիջոցները, որոնք ևս պայմանավորում են աշխատանքի գիտական նորույթը:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Աշխատանքը կատարվել է գրականության արժևորման մի քանի մեթոդներով՝ պատմահամեմատական, համադրական, աղբյուրագիտական և կառուցվածքային: Միաժամանակ ուսումնասիրվել են ճանաչված գրականագետների և տեսաբանների՝ խնդրո առարկա թեմային վերաբերող աշխատությունները:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և գրականության ցանկից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 172 էջ:

Ներածության մեջ ներկայացվել է արևմտահայ ռոմանտիկական արձակի ստեղծման պատմությունը: Արժևորելով գրեթե բոլոր նախորդ ռոմանասիրողների ուշագրավ աշխատանքները՝ հակիրճ շարադրվել է հարցի պատմությունը և ընդգծվել ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության նպատակների ու խնդիրների պարզաբանմամբ հիմնավորվել է ատենախոսության արդիականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՌՈՄԱՆՏԻԶՄԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԿԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1. ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ

Ատենախոսության առաջին գլխի այս ենթաբաժնում ռոմանտիզմի համատեքստում քննվել են XIX դարի երկրորդ կեսի գրական կյանքի գործընթացները: Այդ շրջանում տիրապետող գրական ուղղության թեմատիկան հիմնականում ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունն էր, պատմության վերաիմաստավորումը ներկայի և ապագայի տեսակետից՝ իբրև հայության պատմական առաջընթացի գաղափարական զենքերից մեկը: Հենց այդ շրջանում (1870-1880-ական թթ.) հետազոտության բնագավառ ընտրելով պատմական անցյալը՝ Ծերենցը նոր տեսանկյունից բացահայտեց ու մեկնաբանեց պատմությունը. նա գեղարվեստական ուժով և բարձր արժանահավատությամբ, կենդանի գույներով և վառ պատկերներով վերարտադրեց հայ ժողովրդի հերոսական դրվագները՝ դառնալով պատմավեպի ժանրի սկզբնավորողը: Աներկբա է, որ այն, ինչ արևմտաեվրոպական գրականության մեջ արել էր Վալտեր Սքոթը, հայ գրականության մեջ, որպես նախակարապետ, կատարեց Ծերենցը. նա պատմավեպը՝ իբրև ժանրային ուրույն դրսևորում, առանձնացրեց

¹ Պատմավեպի ժանրը «Յարգելի Ծերենցի մեր մէջ առաջին անգամ ներմուծած ուղղութիւնն է» (**Գեղամյան Հ.**, Ծերենցի երկունք Թ. դարու, Տիփլիս, 1879, «Փղործ» հանդես, 1880, № 8-9 Թիֆլիս, էջ 202): Նույն միտքը հաջորդաբար հաստատել են **Ղ. Ալիշանը** (ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, № 2/21, էջ 237), **Եր. Օտյանը** (Յովսէփ Շիշմանեան (Ծերենց), «Մասիս» լրագիր, 26 յունիս, 1893, № 3997, Կ. Պոլիս, էջ 389), **Ս. Երեմյանը** (Ազգային դէմքեր, Գրագէտ հայեր, 5-րդ շարք, Վենետիկ, Ս. Ղազար, Մխիթարեան Մ. հրատ., 1914, էջ 375), **Հ. Թումանյանը** (Երկերի ժողովածու չորս հատորով, Քննադատություն և հրապարակախոսություն, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 1969, էջ 189) և ուրիշներ:

պատմության թեմայով գրված արձակի բազմազան գործերից² և իր պատմավեպերով ազգային ինքնագիտակցություն և ինքնավստահություն ներարկեց հայ սերունդների երակներում ու հայրենասիրության անշեշտ հուր վառեց ժամանակի երիտասարդության մտքի և սրտի մեջ:

1870-ական թվականներին պատմության նկատմամբ աճող հետաքրքրությունը հանգեցրեց պատմագիտության և պատմագեղարվեստական գրականության միջև տեսական բանավեճի պատմական փաստի և ստեղծագործական ազատության հարաբերակցության շուրջ:

Որպես կանոն, պատմավեպի մեջ դեպքերն ու դեմքերը անցյալին են, հերոսներն իրենց գործողությամբ ու շարժումով լուծում են անցյալի խնդիրները, սակայն նրանց գործունեության ենթատեքստը շրջված և ուղղված է ներկային: Պատմագեղարվեստական լավագույն գործերը մշտապես գրվել են ժամանակի հուզող հարցերին արձագանքելու համար: Բավական է հիշել, ասենք, Լ. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն»-ը, Ի. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, Ծերենցի «Թորոս Լևոնի»-ն, Րաֆֆու «Սամվել»-ը, Մուրացանի «Գևորգ Մարգարետունի»-ն:

Ռոմանտիկական հայ պատմավեպերին բնորոշ են անցյալի իդեալականացումը, հեղինակի սուբյեկտիվ միջամտությունը, հերոսների նախորոշված բնավորությունները, հանդիսավոր ոճը և գունագեղ պատկերային համակարգը: Ժողովուրդը թեև անմիջական գործող սուբյեկտ չէ, սակայն մշտապես ներկա է որպես հայրենիքի և ազգային ամբողջականության խորհրդանիշ:

Ծերենցի պատմավեպերն առանձնանում են քաղաքական իրադարձությունների դինամիկ ներկայացմամբ, կենտրոնաձիգ պետականության գաղափարի շեշտադրմամբ և նախարարական տների տարանջատվածության քննադատությամբ: Վիպասանը դրանք համարում է որպես պատմական ճգնաժամերի և ազգային աղետների պատճառ: Հայ ռոմանտիկական արձակը հիմնականում հանդես է գալիս որպես պատմական գիտակցության ձևավորման, ազգային ինքնագիտակցության ամրապնդման և գեղարվեստական մտածողության զարգացման կարևոր փուլ:

² Գրականագետ Զ. Ավետիսյանը հայ ազգային առաջին վեպը՝ Ի. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն, անվանել է «ժանրային յուրօրինակ հիբրիդ» (Տե՛ս **Ավետիսյան Զ.**, «Հայ պատմավեպի պոետիկան», էջ 28), իսկ Ս. Սարինյանն իր «Հայկական ռոմանտիզմ» աշխատության մեջ գրում է. «Լեր առաջին վեպն իրոք, գրական մի արտասովոր երևույթ էր, քան կարող է թվալ առաջին հայացքից» (**Սարինյան Ս.**, «Հայկական ռոմանտիզմ», էջ 195): Ինքը՝ Ի. Աբովյանը, իր ապրած ժամանակաշրջանին բնորոշ հարցերը դիտել է պատմական տեսանկյունից, այդ իսկ պատճառով «Վերք Հայաստանի»-ն անվանել է պատմական վեպ: Սակայն, հաշվի առնելով այն, որ «Վերքի...» ժանրային, գաղափարական ու կառուցվածքային էությունն ավելի յուրահատուկ, խոր ու բարդ է, միանգամայն սխալ կլինի այն սահմանափակել պատմավեպի ժանրային շրջանակներում: Որքան էլ դրանում առկա են պատմավեպին բնորոշ տարրեր, այնուամենայնիվ պատմավեպ չէ:

1.2. ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՈՒՅՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս ենթագլխում քննաբանվում են XIX դարի երկրորդ կեսի հայ ռոմանտիկ այն գրողների երկերը, որոնք, ստեղծագործելով հանրային-քաղաքական կյանքի բարդ պայմաններում, առանձնահատուկ ուշադրություն են դարձրել պատմության թեմատիկայի արծարծմանը: Դիտարկումները ցույց են տալիս, որ արևմտահայ գրողները շատ ավելի զգայուն էին պատմական անցյալի նկատմամբ, քան նրանց արևելահայ գրչեղբայրները: Պատմությանը դիմելը բնավ էլ ինքնանպատակ չէր. հայ հեղինակներն անցյալի միջոցով վերարտադրում էին ներկան, ներկա հուզող հարցերի պատասխանը փնտրում երեկվա իրադարձություններում և անձնավորությունների վարքագծի մեջ:

«Զարթոնքի շրջան»-ում հայ ժողովուրդը Թուրքիայում սոցիալական կեղեքման հետ մեկտեղ ենթարկվում էր նաև ազգային ու քաղաքական անագորույն ճնշման, կանգնած էր ուժացման և ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև: Սա է պատճառը, որ հատկապես արևմտահայ թատրերգության մեջ, քանի դեռ հանգամանքները թույլ էին տալիս, ողբերգություններ ավելի շատ էին գրվում, և պատմության թեմատիկան ավելի կենսունակ էր, քան արևելահայ իրականության մեջ: Նույն պատկերը նկատելի է նաև պոեզիայում: Արևմտահայ քաղաքացիական բանաստեղծության մեջ, արևելահայի համեմատությամբ, մեծ է պատմահայրենասիրական երգերի տեսակարար կշիռը:

Դիտարկումները կատարվել են ոչ միայն արձակ ժանրերի համապատկերում, այլև անդրադարձ է եղել գեղարվեստական գրականության մեջ պատմության թեմայի տարաբնույթ արծարծումներին՝ ըստ հարկի կանգ առնելով թե՛ քնարերգության և թե՛ դրամատուրգիայի վրա: Վերլուծությունները կատարվել են բնորոշ զուգահեռներով (Ղ. Ալիշան, Պ. Դուլյան, Մ. Պեշիկթաշլյան, Ռ. Պատկանյան, Ս. Շահագիզ...)՝ չտարանջատելով արևմտահայ և արևելահայ գրական երևույթները՝ դրանք դիտարկելով որպես միասնական հայ ազգային գրականության դրսևորումներ:

1.3. ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Այս ենթագլխում քննվում են XIX դարի հայ վիպագրության զարգացման առանձնահատկությունները արևելահայ և արևմտահայ գրական միջավայրերում՝ ընդգծելով դրանց անհամաչափ պայմանավորվածությունը պատմական, քաղաքական և մշակութային գործոններով: Վերլուծվում են այն հանգամանքները, որոնք նպաստել են արևելահայ վիպագրության սոցիալական և պատմական ուղղվածության ձևավորմանը, ինչպես նաև այն սահմանափակումները, որոնց պայմաններում զարգացել է արևմտահայ վեպը:

Առանձնակի ուշադրություն է դարձվում արևմտահայ վիպագրության մեջ եվրոպական, հատկապես ֆրանսիական վեպերի ազդեցությանը, դրանց դերին ընթերցողական ճաշակի ձևավորման գործում և ինքնուրույն ազգային վեպի կայացման վրա ունեցած հետևանքներին: Միջժանրային անորոշության, արկածային և սենտիմենտալ տարրերի գերակայության համատեքստում վերլուծվում է պատմական նյութի կիրառման առանձնահատկությունը արևմտահայ վեպերում: Միաժամանակ ներկայացվում են այն գործերը, որոնք թեև ներառում են պատմության թեմա, այնուամենայնիվ չունեն պատմավեպին բնորոշ կառուցվածքային և ժանրային հստակ կողմնորոշվածություն: Դրանք իրենց «երկդիմությամբ» հատում են և՛ պատմական, և՛ ժամանակակից վեպի խնդրանքային սահմանները: Որոշ դեպքերում պատմական անցյալի դեպքերն ու դեմքերը հիմք դարձնելով և նույնիսկ պատմավեպին հատուկ պոետիկական հնարանքներ օգտագործելով՝ այդ գործերը չեն հասնում գեղարվեստական բավարար մակարդակի: Նման ստեղծագործություններում գաղափարական հարցերը լուծվում են գեղարվեստի օրինաչափություններից դուրս՝ երբեմն նաև շեղվելով դրանցից: Այդ տեսակետից ուշագրավ են Արմենակ Հայկունու, Մատթեոս Մամուրյանի, Սեդրակ Տեր-Սարգսենցի, Հովսեփ Վարդանյանի և ուրիշների վիպական երկերը:

Արդյունքում այս ենթագլխում ձևավորվում է ընդհանուր պատկերացում արևմտահայ պատմավեպի նախապատմության, ժանրային որոնումների և զարգացման ներքին հակասությունների մասին, ինչը կարևոր նախադրյալ է հայ պատմավեպի հետագա ձևավորման և կայացման գործընթացի ըմբռնման համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

2.1. ՊԱՏՄԱՎԵՊԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին ենթագլխում քննվում է Ծերենցի պատմառոմանտիկական վեպի ծնունդը, որով վիպասանը «օրվան նորությունը»³ հռչակվեց Թիֆլիսում: Ուսումնասիրության առանցքում են «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարո» և «Թեոդորոս Ռշտունի» վեպերը, դրանց ստեղծման պայմանները, գաղափարական այժմեականությունը և համազգային ընդունելությունը: Վերլուծվում է Ծերենցի վերաբերմունքը պատմական անցյալին՝ որպես ներկան ըմբռնելու և ազգային-ազատագրական գաղափարները փոխանցելու միջոցի:

³ Տե՛ս Արփիարյան Ա., Երկեր, Հայ դասականների գրադարան, Երևան, «Սովետական գրող» հրատ. 1987, էջ 400:

Ենթազխում անդրադարձ է կատարվում հեղինակային սկզբունքներին պատմական աղբյուրների օգտագործման հարցում՝ ցույց տալով, որ պատմիչներից օգտվելը չի սահմանափակել Ծերենցի ստեղծագործական ինքնուրույնությունը: Քննվում են պատմական փաստերի գեղարվեստական վերաիմաստավորման, կերպարների վերակերտման և պատմական գնահատականներից գիտակցական շեղման երևույթները՝ վիպական սյուժեի ներքին օրինաչափություններին համապատասխան:

Առանձին ուշադրություն է դարձվում Ծերենցի վեպերում ազգային բնավորության, հերոսական ավանդույթների և հասարակ ժողովրդի դերի ընդգծմանը, ինչպես նաև դրական և բացասական կերպարների հակադրության գաղափարական նշանակությանը: Ենթազխում դիտարկվում են նաև հեղինակի լեզվաճանկան առանձնահատկությունները, հնաբանության կիրառումը և դրանց դերը պատմականության պատրանքի ստեղծման գործում՝ միաժամանակ նշելով լեզվական ծանրաբեռնվածության առաջացրած սահմանափակումները:

Ընդհանուր առմամբ, ենթազխում հիմնավորվում է այն տեսակետը, որ Ծերենցը, պատմական անցյալը վերաիմաստավորելով ներկայի և ապագայի դիտանկյունից, ձևավորել է հայ պատմառոմանտիկական վեպի գաղափարական և գեղարվեստական հիմքերը՝ նախանշելով ժանրի հետագա զարգացման ուղիները:

2.2. ՊԱՏՄԱԿԱՆԻ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ քննվում է Ծերենցի պատմավեպերում պատմական անցյալի կիրառումը՝ որպես ազգային-դաստիարակչական և գաղափարական նպատակ ունեցող գեղարվեստական միջոց: Ցույց է տրվում, որ թուրքական բռնապետության պայմաններում ապրող և ժողովրդի տառապանքին անմիջականորեն ապականապես հեղինակի համար պատմական փորձը դառնում է ժամանակակիցներին, հատկապես երիտասարդությանը հայրենասիրական ոգով համակելու և ազգային դիմադրության գաղափարը զորացնելու միջոց:

Ենթազխում բացահայտվում է՝ ինչպես է Ծերենցը միջնադարյան նյութը դարձնում պատմավեպի հիմնական առանցք՝ պահպանելով թե՛ պատմության քննողական գիծը և թե՛ ստեղծագործաբար վերակազմակերպելով փաստական տվյալները: Զանց չեն առնվում նաև նրա աղբյուրագիտական հեռակետերը, պատմիչների և պատմագիտական սկզբնաղբյուրների օգտագործման շրջանակը, ինչպես նաև դրանցից գիտակցական շեղման հնարավորությունները՝ պայմանավորված վիպական սյուժեի ներքին ընթացքով:

Կարևոր տեղ է հատկացվում պատմական հավաստիության ստեղծման հնարքներին. փաստագրական հղումների, պատմիչների խոսքի ներմուծման և միջտեքստային կապերի միջոցով հեղինակն ընթերցողին ուղղորդում է դեպի ենթատեքստային գաղափարական շեշտադրումներ: Միաժամանակ ընդգծվում

է, որ աղբյուրի ներմուծումը չի վերածում վեպը պատմության կրկնության. պատմական նյութը ենթարկվում է գեղարվեստական ընտրության, կերպարակերտման և գաղափարական իմաստավորման: Ինտերտեքստի (միջտեքստայնության) ինքնատիպ դրսևորումներով արձակագիրը հնարավորություն է ստանում ընթերցողի ուշադրությունը հրավիրելու որևէ հիմնախնդրի վրա:

Ենթագլխում հիմնավորվում է, որ Ծերենցը, մի կողմից ապահովելով վիպական պատումի պատմական հենքի հավաստիությունը, մյուս կողմից՝ ստեղծագործաբար վերաիմաստավորելով անցյալը, ձևավորում է հայ պատմավեպի հիմնադիր մոդելը՝ ոչ թե պատմությունը մոդեռնացնելով, այլ այն ընթերցելով ներկայի և ապագայի ազգային խնդիրների դիտանկյունից:

Ծերենցը պատմավեպերն ստեղծելու համար որպես սկզբնաղբյուր օգտագործել է Սեբեոսի, Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու, Սմբատ Սպարապետի, Մատթեոս Ուռհայեցու, Ղևոնդ պատմիչի և այլոց աշխատությունները: Նրա կողմից պատմիչներից օգտվելու երևույթը, սակայն, չի սահմանափակել նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Որպես ստեղծագործող՝ «պատկառելի վիպասանը» (Պետրոս Ադամյանի բնորոշումն է) ինքնուրույն է և՛ պատմիչներից օգտվելիս, և՛ նրանց բացատրություններին հակադրվելիս, որովհետև երկու դեպքում էլ նա այդ ամենը ենթարկում է իր ստեղծագործական մտահղացումներին, վիպական սյուժեների գեղարվեստական ներքին օրինաչափություններին:

2.3. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այս ենթագլխում քննվում են Ծերենցի՝ պատմավեպի ժանրային որոնումների մեկնարկը 1870-ականներին, պատմական լայն հայեցակարգի ձևավորումը և պատմական անցյալի՝ որպես ներկան ըմբռնելու և ազգային ապագան ծրագրավորելու գործիքի, նրա ստեղծագործական ընկալումը: Ցույց է տրվում, որ հեղինակն իր գաղափարական մտահղացումները գեղարվեստորեն մարմնավորելու համար խորազնին ուսումնասիրել է հայոց պատմության տարեգիրքը, ինչպես նաև շրջագայել է Հայաստանի տարբեր վայրերով՝ ծանոթանալու «իդ ազգի վիճակին»: Նա խորապես ճանաչել է հայրենի եզերքի տարածքը՝ պատմական հիշողությունը կապելով ժամանակի ազգային-քաղաքական պահանջներին:

Ենթագլխում ներկայացվում է «Թորոս Լևոնի» վեպի ստեղծագործական պատմությունը, գրության հանգամանքները, առաջին արձագանքը և համագային տարածումը: Վերլուծվում է, թե ինչու վեպը ընկալվեց որպես ժամանակի «օրվան նորություն». այն լույս տեսավ ազգային սպասումների սրման շրջանում և պատմական Հայաստանի կենդանի պատկերներով նպաստեց ազատագրական տրամադրությունների գեղարվեստական ամրապնդմանը: Միաժամանակ ցույց է տրվում, որ Ծերենցը պատմական տարբեր աղբյուրներում առկա տար-

բերակները վերածում է վիպական ամբողջական պատումի՝ սյուժեն կենտրոնացնելով պետականության վերականգնման գաղափարի շուրջ:

Այս բաժնում առանձնակի քննաբանվում են «Երկունք Թ դարու» վեպի ստեղծագործական պատմությունը, գրության ժամանակագրական տվյալները, հրապարակման ուղին և ժամանակակից քննադատության հիմնական դիտարկումները: Շեշտադրվում է, որ վեպում ազատագրական պայքարը ներկայացվում է համաժողովրդական շարժման դիտանկյունից, իսկ գլխավոր հերոսի կերպարը դառնում է ժողովրդի կամքի և ազգային դիմադրության գաղափարական խորհրդանիշ:

Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև «Թեոդորոս Ռշտունի» վեպի գրության մոտավոր ժամանակագրությանը, թեմատիկ-գաղափարական կապին «Երկունք Թ դարու»-ի հետ և VII–IX դարերի ազատագրական պայքարի երկու փուլերի համադրական ներկայացմանը: Արձանագրվում է, որ «Թեոդորոս Ռշտունի»-ում ողբերգական լարվածությունը պայմանավորված է ոչ թե հեղինակային հոռետեսությամբ, այլ պատմական իրավիճակի առանձնահատկությամբ, իսկ ազգային անկումների պատճառները մեկնաբանվում են նախարարական պառակտվածության և քաղաքական անճարակության դիտանկյունից՝ առաջնահերթ դերը վերապահելով հասարակ ժողովրդին:

Դասական գրողների պատմավեպերի հանգամանալից զուգահեռները փաստում են, որ Ծերենցի, Րաֆֆու և Մուրացանի պատմավեպերում առկա է ընդհանուր նմանություն արծարծված հասարակական-քաղաքական խնդիրների, բնավորությունների կերտման արվեստի, պատմական դեպքերի նկարագրման և, որ ամենակարևորն է, հայրենիքի ու հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի գեղարվեստական պատկերավորման առումով: Նշյալ հեղինակներն իրենց վեպերում արտահայտիչ կերպով պատկերել են տարբեր դարաշրջաններում ազատագրական տրամադրություններով շիկացած Հայաստանի փոթորկոտ կյանքը, հայ ժողովրդի մղած անձնագոհ և հերոսական պայքարն օտար նվաճողների դեմ, ցույց տվել նրա հոգեկան կորույն ու վեհությունը, մարդկային-բարոյական անընկճելի մեծ ուժը և հաղթելու անսասան հավատը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԻՊԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՊՈԵՏԻԿԱՆ

3.1. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այստեղ Ծերենցի պատմավեպերի օրինակով քննվում են երկերի կառուցվածքը կազմակերպող ֆաբուլայի, սյուժեի և կոմպոզիցիայի փոխկապակցվածությունը, պատումի յուրահատկությունը և պարզվում՝ ինչպես են կառուցվածքային լուծումները ծառայում հեղինակի գաղափարական մտահղացմանը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հատկապես «Թորոս Լևոնի» վեպում հաճախ գերակայում է ֆաբուլան՝ պատմագիտական փաստերի խտության պատճառով սահմանափակելով սյուժեի ազատ զարգացումը և հանգեցնելով սյուժետային միագծության: Վեպի կոմպոզիցիան հիմնականում կենսապատումային է. գործողությունների սկիզբն ու ավարտը կապվում են գլխավոր հերոսի շարժմանը՝ ժամանակագրական հաջորդականությամբ կառուցելով պատումը: Այս մոտեցման հետևանքով առավել ընդգծվում է պատմական դինամիկան, բայց հաճախ ստվերվում է կերպարների ներաշխարհի խորքային վերլուծությունը:

Ի տարբերություն դրա՝ «Երկունք Թ դարու» վեպում սյուժեն դառնում է բազմաշերտ. արտաքին իրադարձային ընթացքին զուգակցվում են հոգեբանական կոլիզիաներ, փիլիսոփայական շեղումներ և ներդիր սյուժեներ (օր.՝ «Հովնանի երազը»), որոնք խորացնում են ներքին սյուժեն ու գաղափարական ենթաշերտը: Այստեղ հիմնական սյուժեն ունի երկփուլ զարգացում (Հովնան-Գուրգեն) և համալրվում է սիրային ենթասյուժեներով, ինչի շնորհիվ պատումն ստանում է ավելի կենդանի ու հավասարակշռված կառուցվածք:

«Թեոդորոս Ռշտունի» վեպում, ընդհակառակը, նկատվում է կոմպոզիցիոն կենտրոնի թուլացում. ենթասյուժեների, արկածային դրվագների ու հեղինակային հրապարակախոսական շեղումների բազմացումը հաճախ չի միավորվում մեկ ընդհանուր կառուցվածքային համակարգում՝ պատումին հաղորդելով խճանկարային բնույթ: Վերջերքում, սակայն, հեղինակը հստակ ձևակերպում է գաղափարական ամփոփումը՝ ազգային գոյատևման հիմք դիտելով ժողովրդի միաբանությունը և կրթությունը:

3.2. ԿԵՐՊԱՐԱԿԵՐՏՈՒՄԸ

Այս ենթաբաժնում քննվել է Ծերենցի պատմավեպերի կերպարակերտման համակարգը: Ցույց է տրվել, որ հեղինակը, օգտվելով միջնադարյան հայ պատմիչների աշխատություններից, ներկայացնում է հայոց պատմության տարբեր ժամանակաշրջաններ՝ բնորոշ իրադարձություններով ու պատմական դեմքերով: Վերլուծվել է «Թորոս Լևոնի» վեպը, որտեղ XII դարի կեսերին Կիլիկիայում անկախության վերականգնման պայքարը պատկերվում է գլխավոր հերոսի կենսագրական-տարեգրական հենքի վրա, իսկ պատմական ժամանակը կատարում է կերպարակերտման կառուցվածքային դեր: Բացահայտվել է Թորոսի կերպարը՝ որպես խոհեմ և հեռատես պետական գործչի, որի գործունեությունը պայմանավորված է հայրենիքի և ժողովրդի ազատագրման գաղափարով: Ներկայացվել է նաև ազատագրական շարժման գաղափարական հագեցվածությունը Բաբկենի, Կոստանդինի և Սարգսի կերպարների միջոցով՝ որպես անձնավիրության, կամային վճռականության և ազնիվ հայրենասիրության արտահայտություն:

Հատուկ ուշադրություն է դարձվել Ծերենցի վեպերում կանանց կերպարների ներկայացմանը՝ որպես ազգային պայքարի գիտակցված մասնակիցների: Վերլուծվել են Եվփիմեի, Մարգարիտի, Վասկանուշի, Հեղինեի, Սեդայի և Համասպրուհու կերպարները, որոնք մարմնավորում են բարոյական բարձր արժեքներ, անձնագոյություն և հասարակական պատասխանատվություն: Միաժամանակ ընդգծվել են դավաճանության դատապարտման, ավատական մասնատվածության քննադատության և ազգային միասնության գաղափարները՝ որպես պետականության պահպանման և ազատագրության հիմնարար նախապայմաններ:

3.3. ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առենախոսության եզրափակիչ ենթագլխում քննության է առնվել լեզվի և ոճի փոխկապակցվածությունը՝ որպես գրողի անհատականության դրսևորման փոխլրացնող գործոններ, և դրա հիման վրա վերլուծվել են Ծերենցի վեպերի լեզվաոճական առանձնահատկությունները: Ընդգծվել է, որ հեղինակը, գեղարվեստորեն վերարտադրելով պատմական անցյալը, միաժամանակ ստեղծում է սոցիալական հարաբերությունների ճշգրիտ նկարագիր և կերպարակերտման յուրահատուկ արվեստ, որտեղ հերոսների խոսքը և հեղինակային շարադրանքը ենթարկվում են պատմական միջավայրի և գաղափարական նպատակադրումների պահանջներին:

Ծերենցի լեզվաոճական հիմնական առանձնահատկություններից են հուզական երանգավորումը, գունագեղությունն ու պատմական կոլորիտի ձևավորումը՝ ժողովրդի խոսքի, բարբառային տարրերի, արխայիզմների և գրաբարյան շերտերի նպատակային կիրառմամբ: Վերլուծվել է նաև գեղարվեստական արտահայտչամիջոցների՝ համեմատության, փոխաբերության, մակդիրի և չափազանցության դերակատարումը, որոնց միջոցով խտացվում են հերոսների բնավորության գծերը, գաղափարական հակադրությունները և պատմական իրադրությունների դրամատիզմը:

Միաժամանակ ցույց է տրվել, որ գրաբարյան-արխայիկ բառապաշարի և քերականական որոշ ձևերի հաճախական ու երբեմն անհարկ գործածությունը կարող է բարդացնել ընկալումը և իջեցնել տեքստի ընթերցելիությունը լայն շրջանակների համար: Ընդհանուր գնահատմամբ՝ Ծերենցի ոճի առավել բնորոշ կողմերից մեկը հնաբանության գերակշռող ներկայությունն է, որը մի կողմից՝ նպաստում է պատմականության պատրանքի ստեղծմանը, մյուս կողմից՝ առաջադրում է լեզվական չափի և նպատակահարմարության խնդիր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայ ռոմանտիկ հեղինակները, ստեղծագործելով հանրային-քաղաքական կյանքի բարդ, ներհակ ու գոյաբանական խնդիրների առկայության պայմաններում, իրենց ուշադրությունը հատկապես բևեռել են պատմական թեմատիկայի վրա: Արևմտահայ գրողները, սակայն, շատ ավելի զգայուն էին պատմական անցյալի նկատմամբ, քան նրանց արևելահայ գրչեղբայրները:

2. Արևմտահայ արձակն սկզբնապես թեև հաճախ ներշնչված էր եվրոպական օրինակներով, աստիճանաբար ստանձնում էր նաև ազգային-քաղաքական առաքելություն: Ստեղծվում են պատմության թեմա արձարժող վեպեր, որոնք, սակայն, դեռևս չունեին պատմավեպին բնորոշ կառուցվածքային և ժանրային հստակ հատկանիշներ. դրանք իրենց «երկդիմությամբ» հատում են և՛ պատմական, և՛ ժամանակակից վեպի խնդրառության սահմանները: Որոշ դեպքերում պատմական անցյալի դեպքերն ու դեմքերը հիմք դարձնելով և նույնիսկ պատմավեպին հատուկ պոետիկական հնարքներ օգտագործելով՝ այդ գործերը չեն հասնում գեղարվեստական բարձր մակարդակի: Նման երկերում գաղափարական հարցերը լուծվում էին գեղարվեստի օրինաչափություններից դուրս՝ երբեմն նաև շեղվելով դրանցից: Այդպիսիներից են, օրինակ, Արմենակ Հայկունու «Էլիզա կամ վերջին դեպ մը», Մատթեոս Մամուրյանի «Սև լեռին մարդը», Սեդրակ Տեր-Սարգսենցի «Շահենն ի Սիպիր կամ Գաղթական Հայը», Հովսեփ Վարդանյանի հայատառ թուրքերենով գրված «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» և ուրիշ շատ գործեր:

3. Ծերենցը հայ առաջին պատմավիպասանն է: Նա պատմավեպը՝ իբրև ժանրային ուրույն դրսևորում, առանձնացրեց պատմական թեմայով գրված արձակի մյուս գործերից. 1877-ին լույս ընծայեց «Թորոս Լևոնի»-ն, որով հայ գրականության մեջ ըստ էության սկզբնավորեց պատմավեպի ժանրը՝ պատմական անցյալի գեղարվեստականացման սկզբունքներով, կերպավորման եղանակներով և ուրույն լեզվամտածողությամբ:

4. XIX դարի երկրորդ կեսին դիմելով պատմական անցյալին՝ Ծերենցն այն վերաիմաստավորեց ներկայի և ապագայի տեսակետից: Պատմական անցյալին դիմելը թե՛ Ծերենցի, թե՛ Րաֆֆու և թե՛ Մուրացանի համար ինքնանպատակ չի եղել. դա միջոց էր իրենց հուզող հարցերին արձագանքելու և «ապրող ու գործող» սերունդներին ոգևորելու համար:

5. «Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» վեպերը գրվել և հրատարակվել են ճիշտ ժամանակին: Ծերենցի կողմից պատմիչներից օգտվելու երևույթը բոլորովին չի սահմանափակել նրա ստեղծագործական ինքնուրույնությունը: Որպես ստեղծագործող՝ վիպասանն ինքնուրույն է թե՛ բազմաթիվ պատմիչներից օգտվելիս, թե՛ նրանց բացատրություններին հակադրվելիս:

Երկու դեպքում էլ նա այդ բոլորը ենթարկում է իր ստեղծագործական մտահղացումներին, վիպական սյուժեների գեղարվեստական ներքին օրինաչափություններին՝ առանց արդիականացելու պատմությունը:

6. «Երկունք Թ դարոս» վեպը Ծերենցի գրական հասունության և գեղարվեստական վարպետության փայլուն արտահայտությունն է: Այն ընդգրկման ուժով ու գաղափարական խորությամբ ոչ միայն վիպասանի, այլև հայ պատմավիպագրության լավագույն կոթողներից է՝ խոր ընդհանրացումների, ստեղծագործական տարերքի և հայոց պատմության գեղարվեստականացման հզոր օրինակ: Լինելով հեղինակի նախորդ երկերի լավագույն հատկանիշների շարունակությունը՝ կերպարների հոգեբանական զարգացման և գեղարվեստական մանրամասների ընտրության առումով, այս ծավալուն վեպը պարունակում է բազմաթիվ նորարարություններ: Գրողը դիմում է ստեղծագործական որոնումների ու փորձարարական հնարքների, որոնք նրան բերում են ակնառու հաջողություններ՝ բացահայտելով նրա տաղանդի մինչ այդ չբացահայտված կողմերը:

7. Ծերենցն առաջիններից էր, որ վիպագրության կենտրոնը դարձրեց հասարակ ժողովրդից ելած շարքային մարդուն և նրան վերագրեց հերոսականության, ազգասիրության ու առաքինության բարձր հատկանիշներ: Իր գաղափարները հաջողությամբ մարմնավորեց կոնկրետ մարդկային կերպարներում, կերտեց ոչ միայն հայրենասեր, դրական կերպարներ, այլև քննադատեց դավաճան ու ազգադավ նախարարներին ու հոգևորականներին:

8. Ծերենցն իր պատմավեպերում կերտած կանացի կերպարներով, նրանց հերոսականությամբ ու անձնագրի գործունեությամբ ցանկացել է դաստիարակել նոր ժամանակի սերունդներին: Վեպերում հանդես եկող կանայք ամենադժվարին պարագաներում անգամ բարձր են պահում իրենց հասարակական պարտքի գիտակցությունը՝ իբրև ժողովրդին նվիրված ջերմ հայրենասերներ:

9. Ծերենցի, Րաֆֆու և Մուրացանի պատմավեպերում ներկայացված դավաճան նախարարների, իշխանների և հոգևորականների կերպարների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայրենիքի, ժողովրդի, կրոնի ուրացումը, օտար բռնականների հետ դաշնակցելը՝ հակառակ ժողովրդի շահերի, ծանրագույն հանցանք է՝ դավաճանություն, և արժանի է ամենասանդոք պատժի: Երեք վիպասաններն էլ ձաղկել են դավաճանությունն ու անմիաբանությունը և դրան հակադրել հայրենասիրության ամբողջ վեհությունը՝ առաջադրելով ազգային միասնության գաղափարը՝ իբրև հայրենիքի անկախության և ժողովրդի ինքնության պահպանման կարևորագույն նախապայման:

10. «Թորոս Լոնի» և «Երկունք Թ դարոս» պատմավեպերի ստեղծագործական պատմության մանրամասների առումով անգնահատելի արժեք են ներկայացնում վիպասանի դստեր՝ Թագուհի Շիշմանյանի նամակները:

11. «Թորոս Լևոնի» վեպում պատմական դեպքերի մի մասը հեղինակը վերապատմում է՝ առանց կոնկրետացնելու այն մարդկային փոխհարաբերությունների մեջ: Քիչ են օգտագործված պատմական այն աղբյուրները, որոնք նյութ են ծառայում այդ ժամանակաշրջանի Կիլիկիայի ժողովրդի կենցաղի, բարքերի նկարագրության համար:

12. Թեև Ծերենցը, օգտագործելով փաստական ճշգրիտ տվյալները, ստեղծագործական երևակայության և արվեստի ուժով գեղարվեստորեն ներկայացրել է դեպքերը, ստեղծել գեղարվեստական կերպարներ, տվել ժամանակաշրջանի մարդկանց սոցիալ-հոգեբանությունը և դարաշրջանի հասարակական կյանքի բուն էությունը, այնուամենայնիվ նրա պատմավիպասանության մեջ գերիշխում է փիլիսոփայական տարրը:

13. Ծերենցի պատմավեպերում հաճախադեպ են ինտերտեքստի (միջտեքստայնության) ինքնատիպ դրսևորումները, որով վիպասանը հնարավորություն է ստանում ընթերցողի ուշադրությունը հրավիրելու որևէ հիմնախնդրի վրա:

14. Վեպերի լեզուն ունի հուզական երանգավորում, գունագեղ է, կոլորիտային և արտահայտիչ: Նա յուրաքանչյուր բառին, նախադասությանը հաղորդել է համապատասխան գույն ու երանգ, իր հերոսների անձնագծի գործունեությունը ներկայացրել լեզվական երանգավորումով, գեղարվեստական հարուստ միջոցներով:

15. Տարբեր պատմաշրջաններ ընդգրկող նրա վեպերը լեզվաարտահայտչական կառուցվածքի տեսակետից ունեն նկատելի ընդհանրություններ. նման են թե՛ թեմատիկայով, թե՛ շոշափած գաղափարներով, թե՛ լեզվի և ոճավորման արվեստի օգտագործած հետաքրքիր հնարքներով և թե՛ տիպականացման արվեստի բնորոշ կողմերով: Ծերենցն իր ստեղծագործական մտահղացումներով, լեզվական կարողություններով գեղարվեստորեն վերամարմնավորել է պատմական դարաշրջանում տեղի ունեցող դեպքերն ու իրադրությունները, ստեղծել գեղարվեստական ազդեցիկ և բնութագրական պատկերներ:

16. Վիպասանը, քաջածանոթ լինելով հայ հին և նոր գրական լեզուների արտահայտչամիջոցներին, բարբառներին, դարձվածքներին, օգտագործել է այդ լեզուների հարուստ բառապաշարը... Յավոք, վիպասանի երկերում առկա են անհարկի գործածված գրաբար բառեր ու ոճական արտահայտություններ, պատմիչների երկերից թափանցված ամբողջական հատվածներ ու նախադասությունները, որոնք երբեմն իջեցնում են պատումի լեզվական արժեքը, ավելին՝ ընթերցող լայն շրջանների համար դառնում դժվարընթեռնելի և դժվարամարս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ալոյան Լ. (Ներսես արք.) «Կնոջ կերպավորումը Ծերենցի վեպերում», Գրականագիտական հանդես, ԻԳ, թիվ 2021-2, Երևան, 2021, էջ 15-35:
2. Ալոյան Լ. (Ներսես արք.) «Ծերենցի պատմավեպերի լեզվաոճական առանձնահատկությունները», Կաճառ գիտական պարբերական, թիվ 1, Երևան, 2022, էջ 52-69:
3. Ալոյան Լ. (Ներսես արք.) ««Թորոս Լևոնի» վեպի ստեղծագործական պատմությունը և արձագանքները», Հայագիտական հանդես, թիվ 1 (55), Երևան, 2022, էջ 110-120:
4. Ալոյան Լ. (Ներսես արք.) «Դավաճանները Ծերենցի պատմավեպերում», Գիտական Արցախ, թիվ 2 (13), Երևան, 2022, էջ 141-155:
5. Ալոյան Լ. (Ներսես արք.) «Ծերենցի պատմավեպերի աղբյուրագիտական քննություն», Գրականագիտական հանդես, ԻԶ, թիվ 2023-1, Երևան, 2023, էջ 54-75
6. Ալոյան Լ. (Ներսես վրդ.) Արևմտահայ ողմանտիկական պատմավեպի ժանրային առանձնահատկությունները, Հայագիտական հանդես, թիվ 1 (68), Երևան, 2025, էջ 87-111:

ЛЕВОН АЛОЯН

ИСТОРИЧЕСКАЯ ТЕМАТИКА В ЗАПАДНОАРМЯНСКОЙ РОМАНТИЧЕСКОЙ ПРОЗЕ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10 . 01 . 01 - «Средневековая и новая армянская литература».

Защита диссертации состоится 11 февраля 2026 г. в 14³⁰ на заседании специализированного совета литературоведения 012 ВАК РА действующего при Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван, ул. Абовяна 52^а, корпус факультета армянской филологии ЕГУ, 202 аудитория.

Резюме

Актуальность темы. И сегодня — в один из переломных периодов армянской истории, когда наша древняя страна стоит перед судьбоносными экзистенциальными распутьями, возникает необходимость по-новому осмыслить и проанализировать пройденный ею путь с целью извлечения ценных уроков из исторического опыта. Последствия двух Арцахских войн также

обязывают к глубокому обращению к исторической судьбе Армении и армянского народа, к подвигам героев и героинь, боровшихся за его стойкость и выживание, а также к противоречивым и взаимоисключающим проявлениям, к которым в свое время обращался Церенц в романах «Торос Левони», «Рождение IX века» и «Теодорос Рштуни».

В наши дни творчество Церенца, несмотря на широкий охват жизненного материала и обращение к неизменно актуальным темам, практически оказалось вне поля серьезных научных исследований. Это обстоятельство обусловлено как спадом профессионального интереса к его литературному наследию, так и ограниченным привлечением его произведений в контексте современных критических методологий. В результате эстетическое, идейное и историографическое значение романов Церенца продолжает оставаться недостаточно проанализированным и оцененным. Подобное положение несправедливо во всех отношениях, тем более что последнее исследование, посвященное его творчеству в форме монографии, было опубликовано 65 лет назад.

Обращаясь к историческому прошлому и переосмысливая его с точки зрения настоящего и будущего, Церенц выступил основоположником жанра исторического романа. Для создания трех своих исторических романов он опирался на труды армянских историков, при этом сохранив творческую самостоятельность и оригинальность. Свои идеи он успешно воплотил в конкретных человеческих образах, создав не только патристические, положительные характеры, но и подверг критике предателей и изменников национальных интересов — явление, присущее всем эпохам.

Цели и задачи исследования. Целью диссертации является исследование темы истории в западноармянской романтической прозе, ядро которого составляет всестороннее изучение историко-эпического творчества Церенца. В соответствии с поставленной целью выдвигаются следующие задачи:

- исследовать жанровые особенности западноармянского романтического исторического романа и всесторонне осветить процесс становления жанра;
- обратить внимание не только на проблему соотношения исторического факта и вытекающей из него художественной реальности, но и на отношение и взгляды основоположника жанра — Церенца — к истории и современности, особенности его художественного воображения, мастерство преобразования жизненного факта в художественный;
- выявить и проанализировать историографические источники романов Церенца с целью определить степень их влияния на художественное мышление и творческую направленность писателя историка-романиста;

- изучить и сопоставить образы романов Церенца с аналогичными персонажами исторических романов Раффи и Мурацана;
- по-новому представить подвиги женщин — носителей идеи патриотизма — в ходе освободительных движений VII и IX веков, а также дать всестороннее освещение феномену женского образа;
- исследовать язык исторических романов «Торос Левони», «Рождение IX века» и «Теодорос Рштуни», до настоящего времени не изученный с должной глубиной, выявить его особенности и выразительные средства, формирующие художественный язык и индивидуальный стиль.

Научная новизна работы. Следует отметить, что тема диссертации в рамках армянского литературоведения до настоящего времени не подвергалась комплексному исследованию, хотя в отдельных работах и статьях предпринимались краткие обращения к данной проблематике.

В диссертации впервые предпринимается попытка всестороннего изучения и типологического анализа исторических романов Церенца, Раффи и Мурацана, выявляется предательское отношение армянской элиты — нахараров, князей и духовенства — к родине и народу. По-новому представлен образ патриотичной женщины в освободительной борьбе, а феномен женского персонажа подвергается комплексному освещению. С надлежащей глубиной исследуется также язык исторических романов Церенца, его особенности и лингвостилистические выразительные средства, что также обуславливает научную новизну работы.

Методология исследования. Работа выполнена с применением ряда методов литературоведческого анализа: историко-сравнительного, сопоставительного, источниковедческого и структурного. Одновременно были изучены труды признанных литературоведов и теоретиков, посвященные рассматриваемой проблематике.

Структура диссертации. Работа состоит из оглавления, введения, трех глав с соответствующими подразделами, заключения и списка литературы. Общий объем диссертации составляет 172 страницы.

Во введении представлена история становления романтического исторического романа. Оценивая материал и исследования почти всех предшественников, кратко изложена история вопроса и подчеркнута научная новизна диссертации. Путем разъяснения целей и задач исследования обоснована актуальность диссертационной работы.

Первая глава диссертации озаглавлена «*Романтизм в западноармянской исторической прозе*». В подразделе рассматривается роль романтизма в формировании и развитии западноармянского исторического романа второй половины XIX века. Анализируется идейно-художественная функция исторической тематики в контексте национально-освободительной идеологии, формирования

исторического и национального самосознания, а также переосмысления прошлого с позиций современности. Особое внимание уделяется творчеству Церенца как основополагающему этапу становления жанра армянского исторического романа. Проводится сопоставительный анализ особенностей развития западно-армянской и восточноармянской прозы, обусловленных историческими, политическими и культурными факторами.

Вторая глава озаглавлена «*Историко-философские взгляды Церенца*». В подразделе анализируются историко-романтические романы Церенца («Торос Левон», «Рождение IX века», «Феодорос Рштуни») в контексте формирования армянского исторического романа второй половины XIX века. Рассматривается авторская концепция осмысления исторического прошлого как средства понимания современности и передачи национально-освободительных идей, а также принципы творческого использования исторических источников. Особое внимание уделяется художественной переработке фактического материала, типологии героев, роли народа и созданию эффекта исторической достоверности. Обосновывается положение о Церенце как основоположнике идейно-художественной модели армянского историко-романтического романа.

Третья глава называется «*Поэтика исторической прозы Церенца*». В подразделе рассматривается поэтика исторических романов Церенца, соотношение фабулы, сюжета и композиции и их функциональная роль в раскрытии авторской идейной концепции. Анализируются особенности сюжетостроения в романах «Торос Левон», «Рождение IX века» и «Феодорос Рштуни», типология героев, роль народа и идейно-художественная значимость образной системы. Отдельное внимание уделяется языково-стилистическим особенностям, использованию архаизмов и средств художественной выразительности, формирующих эффект исторической достоверности.

В разделе заключения нами представлены такие выводы, к которым мы пришли в результате проведенного исследования.

Диссертация завершается списком использованной литературы.

LEVON ALOYAN

THE THEME OF HISTORY IN WESTERN ARMENIAN ROMANTIC PROSE

Dissertation to obtain the degree of a Candidate of Philology. Field of specialization: 10. 01.01 – Armenian Medieval and Modern Literature.

The defense of the dissertation will take place on February 11, 2026 at 14³⁰ p.m., at the HQC (Higher Qualification Committee) Specialized Council 012 of "Literature Studies" at Yerevan State University (YSU).

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

Summary

Significance of the Topic. Even today—at one of the pivotal periods of Armenian history, when our ancient country stands at decisive existential crossroads—there is a pressing need to reassess and analyze anew the path it has traversed, with the aim of drawing valuable lessons from historical experience. The consequences of the two Artsakh wars likewise compel in-depth engagement with the historical destiny of Armenia and the Armenian people; with the feats of the heroes and heroines who fought for its steadfastness and survival; and with the contradictory and mutually opposing manifestations addressed in their time by Tserents in his novels *Toros Levoni*, *The Birth of the Ninth Century*, and *Theodoros Rshtuni*.

In our day, the oeuvre of Tserents, despite its broad engagement with the dynamics of life and its treatment of enduringly relevant themes, has largely remained outside the scope of serious scholarly inquiry. This circumstance is due both to a decline in professional interest in his literary legacy and to the limited incorporation of his works within the framework of contemporary critical methodologies. As a result, the aesthetic, ideological, and historiographical significance of Tserents's novels continues to remain insufficiently analyzed and appreciated. Such a situation is unjustifiable in every respect, especially given that the most recent monographic study devoted to his work was published sixty-five years ago.

By turning to the historical past and reinterpreting it in light of the present and the future, Tserents emerged as a founder of the Armenian historical novel. In his three historical novels, he drew on the writings of Armenian historians while maintaining creative independence and originality. He also translated his ideas into fully realized characters, crafting not only patriotic and exemplary figures but also exposing traitors and those who betrayed national interests to critical scrutiny—a phenomenon that recurs across eras.

Aims and objectives of the research. The dissertation aims to investigate the theme of history in Western Armenian Romantic prose, with its core anchored in a comprehensive study of Tserents's historical novels. In accordance with this aim, the dissertation pursues the following objectives:

- to examine the genre characteristics of the Western Armenian Romantic historical novel and to provide a comprehensive account of the genre's formation;
- to analyze not only the relationship between historical fact and the artistic reality derived from it, but also the founder of the genre—Tserents's

attitudes and views on history and contemporaneity, the features of his artistic imagination, and his mastery in transforming factual material into artistic form;

- to identify and analyze the historiographical sources of Tserents's novels to determine the extent of their influence on his artistic thinking and creative orientation;
- to study and compare the characters in Tserents's historical novels with analogous figures in the historical novels of Raffi and Muratsan;
- to re-examine the exploits of women as bearers of patriotism during the liberation movements of the seventh and ninth centuries, while also offering a comprehensive analysis of the female character as a literary phenomenon;
- to examine in depth the language of the historical novels *Toros Levoni*, *The Birth of the 9th Century*, and *Theodoros Rshtuni*, with particular attention to their distinctive features and modes of expression that shape their artistic language and individual style.

Scientific novelty of the study. The dissertation topic has not yet been addressed in a comprehensive manner within Armenian literary scholarship, although it has received brief attention in individual studies and articles.

For the first time, the dissertation offers a comprehensive typological analysis of the historical novels of Tserents, Raffi, and Muratsan, bringing to light the traitorous attitudes of segments of the Armenian elite—nobles, princes, and clergy—toward the homeland and the people. The image of the patriotic woman in the liberation struggle is presented in a new light, and the phenomenon of the female character is subjected to thorough and systematic examination. In addition, the dissertation analyzes the language of Tserents's historical novels—their distinctive features and linguistic-stylistic expressive means—in depth, which also constitutes an element of the study's scientific novelty.

Methodology of the research. The dissertation employs a range of methods of literary analysis, including historical-comparative, comparative, source-studies, and structural approaches. It also draws on the works of established literary scholars and theorists relevant to the subject under investigation.

Structure of the dissertation. The dissertation consists of a table of contents, an introduction, three chapters with corresponding subchapters, conclusions, and a bibliography. The dissertation totals 172 pages.

The introduction presents the history of the formation of the Romantic historical novel. While acknowledging and evaluating the material studied by preceding scholars, it outlines the history of the issue concisely and emphasizes the dissertation's scientific novelty. By clarifying the research aims and objectives, the introduction also substantiates the dissertation's relevance.

The first chapter, “Romanticism in Western Armenian Historical Prose,” examines the role of Romanticism in the formation and development of the Western Armenian historical novel in the second half of the nineteenth century. It analyzes the ideological and artistic function of historical subject matter in the context of national-liberation ideology, the formation of historical and national self-consciousness, and the reinterpretation of the past from the standpoint of the present. Particular attention is devoted to the works of Tserents as a foundational stage in the emergence of the Armenian historical novel. The chapter also offers a comparative analysis of the distinctive trajectories of Western Armenian and Eastern Armenian prose as shaped by historical, political, and cultural factors.

The second chapter, “The Historical and Philosophical Views of Tserents,” analyzes Tserents’s historical-romantic novels (*Toros Levon*, *The Birth of the Ninth Century*, and *Theodoros Rshtuni*) within the context of the formation of the Armenian historical novel in the second half of the nineteenth century. It examines the author’s concept of interpreting the historical past as a means of understanding the present and articulating national-liberation ideas, as well as the principles governing his creative use of historical sources. Particular attention is paid to the artistic reworking of factual material, the typology of heroes, the role of the people, and the production of an effect of historical authenticity. The chapter substantiates the view of Tserents as the founder of the ideological and artistic model of the Armenian historical-romantic novel.

The third chapter, “The Poetics of Tserents’s Historical Prose,” examines the poetics of Tserents’s historical novels, including the interrelation of fabula, plot, and composition and their functional role in articulating the author’s ideological conception. It analyzes plot construction in *Toros Levon*, *The Birth of the Ninth Century*, and *Theodoros Rshtuni*, the typology of characters, the role of the people, and the ideological and artistic significance of the system of images. Special attention is devoted to linguistic and stylistic features, including the use of archaisms and artistic expressive devices that create an effect of historical authenticity.

The concluding section presents the main findings of the research. The dissertation ends with a list of the literature used.

